Ս.ՇՏԻԿՅԱՆ

ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԱԽՏԱՎՈՐԸ

Լրացավ սովետահայ գրող, գրական-մշակութային գործիչ Վահրամ Ալազանի (Վահրամ Մարտիրոսի Գաբուզյան) ծննդյան 70-ամյակը։ Հանրաճանաչ մի անուն է սա, որը պերճախոս հանձնարարականների ու երկար մտորումների կարիք, թերևս, չունի։

... Վանեցի էր և իր սերնդակիցներից մեծ մասի նման ստիպված էր եղել կրել գաղթի, սովի, համաճարակների, զրկանքների բերած բոլոր տառապանքները։ Մեծ դժվարությամբ հաստատվեցին Երևանում։ Աշխատանքային գործունեությունը սկսեց որպես տպարանի գրաշար բանվոր և միաժամանակ բանաստեղծություններով սկսեց հանդես գալ «Խորհրդային Հայաստան» թերթում։ Այդ բանաստեղծությունները շնորհալի սկսնակի կնիքն ունեին իրենց վրա և պատահական չէ, որ արժանացան Ալ. Մյասնիկյանի ուշադրությանը։ ՈՒսման հետ միաժամանակ Ալազանն առաջ է քաշվում ղեկավար պատասխանատու աշխատանքների։ 1922-30 թթ. նա խմբագրում է «Տպագրական բանվոր» թերթը, որտեղ էլ աստիճանաբար հրատարակում է իր զանազան բանաստեղծություններն ու գեղարվեստական մանրապատումները։ 1923-32 թթ. Ալազանն ընտրվում է Հայաստանի պրոլետգրողների ասոցիացիայի նախագահ, իսկ 1927-36 թթ. նախորդ պաշտոնների հետ մեկտեղ նրան է վստահվում Հայաստանի Կենտգործկոմի և ԶակՖեդերացիայի Կենտգործկոմի անդամության պատասխանատու պոստը. Վահրամ Ալազանը դառնում է ճանաչված հասարակական գործիչ։

1935 թվականը նշանավոր եղավ սովետական ժողովուրդների կյանքում։ Փարիզում իր գործունեությունն սկսեց Կուլտուրայի պաշտպանության միջազգային կոնգրեսը, որին Էրենբուրգի, Տիխոնովի, Ալ. Տոլստոյի, Ալ.Կորնեյչուկի, Յա. Կոլասի և այլոց հետ, մասնակցելու պատվին արժանացավ նաև Ալազանը։ Եվ Փարիզի «Համաձայնության» պալատում 1935 թվականի հուլիսին հնչեց հայ պատվիրակի հուզված ձայնը, որն ամբողջ աշխարհին պատմեց փոքրաթիվ ու մեծագործ հայ ժողովրդի մասին, որը կառուցում է իր ազատ ու երջանիկ կյանքը՝ խորհրդային տասնհինգ ժողովուրդների եղբայրական ազատ ընտանիքում։

Նկատի ունենալով նրա կազմակերպչական ակնառու կարողությունները, 1933 թվականին Հայաստանի գրողների միության վարչությունը Ալազանին ընտրում է Առաջին քարտուղար, ծանր ու պարտավորեցնող մի պաշտոն, որը նա կարողանում է հմտությամբ վարել շուրջ վեց տարի։ Այս պաշտոնի հետ մեկտեղ նույն՝ 1933 թվականից, նրան է վստահվում «Գրական թերթի» խմբագրի պարտականությունները։ Ալազանն այստեղ էլ լավ կողմից է դրսևորում իրեն և աստիճանաբար կարողանում է իր շուրջը համախմբել գրական-քննադատական մտքի այնպիսի ներկայացուցիչներ, որոնք այսօր իրենց ուսերին են տանում սովետահայ մշակույթի ամբողջ ծանրությունը։

... Բանաստեղծությունների ու պոեմների առաջին ժողովածուները, որոնք սկսեցին հանդես գալ 1929 թվականից («Տարիների խաղը», «Հրաբխապոեզիա», «Օրիորդ Օլգա»), նոր գրականության այն դրսևորումներն էին, որոնց ղեկավար դրույթները տվել էր Ալազնի մտերիմը՝ Մաքսիմ Գորկին։ Նրա հետ ունեցած բազմաթիվ անձնական խոսակցությունների, երկարատև նամակագրական կապի միջոցով հեղափոխության մրրկահավը Ալազանին բացահայտեց սոցիալիստական գրականության հիմնական սկզբունքը՝ նոր մարդը նոր պայմաններում։ Այդ նոր մարդուն հաջողությամբ գտնելու ու ոչ պակաս հաջողությամբ վերարտադրել կարողանալու կարողությունն էր այն հիմնական պատճառներից մեկը, որի հետևանքով նշված ու չնշված այլ ժողովածուները բանաստեղծի անուն բերեցին Ալազանին, իսկ ինքը՝ Ալազանը, կանգնեց նոր՝ սովետահայ գրականությունը սկզբնավորողների ու շարունակողների առաջին շարքերում։

«Դասալիքը» վիպակը և մանավանդ «Ճանապարհին» վեպը հաստատեցին Ալազանի անառարկելի կարողությունները նաև արձակի բնագավառում։ Զգալի դեր խաղաց հեղինակի ծանոթությունը հայ գրականության դասականի՝ Ալ. Շիրվանզադեի հետ, որն իր հարուստ փորձն ու գիտելիքները հոգատարությամբ փոխանցում էր երիտասարդ ստեղծագործողին։ Ընթանալով չտրորված ճանապարհով՝ Ալազանը հաջողությամբ կարողացավ պատկերել կորովի անձանց այն համախումբը, որոնք իրենց հերոսական, անձնուրաց աշխատանքով դնում էին նոր կյանքի առաջին քարերը։ Ալազանի «Վաթսուներորդ հորիզոնում» վեպը, որը աշխարհ եկավ 1934 թ. և

թարգմանվելով ռուսերեն, երկու հրատարակություն ունեցավ, նվիրված էր հենց այդ նյութին։ Արդյունաբերական թեմայի հենքի վրա դուրս են բերված Ռահիմի Էլյալի, դյադյա Անդրեյի և ուրիշների ամբողջական կերպարները, պատկերված են նոր մարդուն բնորոշ հարաբերությունները։ Ալազանի «Վաթսուներորդ հորիզոնում» վեպը արդյունաբերական թեմատիկայով գրված առաջին հաջողված ստեղծագործությունն է սովետահայ գրականության մեջ, և որպես այդպիսին իր կայուն տեղն է նվաճել հայ գեղարվեստական գրականության պատմության մեջ։

Փարիզյան՝ հիշատակված ուղևորության արդյունքը հանդիսացավ «Դղյակներ և որջեր» մեմուարային ստեղծագործությունը, որի մասին մեր մամուլը դրվատանքով արտահայտվեց։ Նկարագրելով Ֆրանսիան ու Փարիզը իր ոչ ֆասադային կողմից, Ալազանը ցույց տվեց ժողովրդի ծանր, անմարդկային վիճակը, հանապազօրյա պայքարը մի կտոր հացի համար, գոյության ծանր պայմաններից ծնվող սոցիալական չարիքը։ «Դղյակներ և որջերը» հրատարակվեց երկրորդ անգամ 1960 թվականին և դարձյալ ունեցավ նույն ընդունելությունը։

Հետ չէին մնում նաև բանաստեղծությունները։ Ալազանը սովետահայ բանաստեղծներից թերևս առաջինն էր, որ գրական այդ ժանրը ծառայեցրեց խայթող երգիծանքի համար։ Հումորով լի, աշխույժ, նպատակին խփող այդ գործերով Ալազանը ծաղրում էր գործին վնաս բերող եռանդը, գրական տհասությունից բխող «սկզբունքայնությունը», ամեն տեղ և ամեն ինչում վնաս տեսնելու միտումը և այլն։

1954 թվականին, տասնյոթ տարվա ընդմիջումից հետո, Վահրամ Ալազանը հրատարակեց իր բանաստեղծությունների ժողովածուն «Բանաստեղծի սիրտը» խոսուն վերնագրով, իսկ 1957 թվականին՝ «Հորիզոններ» ժողովածուն։ Վերջինը հեղինակի բանաստեղծական գործունեության մի տեսակ ամփոփումն էր։ Նոր գրված չափածո գործերի, պոեմների, բալլադների հետ մեկտեղ («Ասք սիբիրուհու և Արզնիգէսի մասին», «Երևանյան էտյուդներ», «Լուսեղենն ու Կարոտը» և այլն), որոնցում կրկին անգամ երևում է հեղինակի չխաթարված սերը դեպի իսկական մարդը և աներեր հավատը դեպի պայծառ գալիքը, «Հորիզոններ» ժողովածվում ուշագրավ է «Սիրո քառյակներից» շարքը,

նվիրված իր կյանքի հավատարիմ ընկերուհուն՝ Մարո Ալազանին։ Վահրամ Ալազանի և իր կնոջ՝ Մարո Ալազանի ջերմ մտերմությունը, ամեն դժվարություններ միասին կիսելու, կյանքի թե լավ և թե վատ հարվածները մեկտեղ տանելու, ամենուրեք և ամեն պայմաններում իրար հենարան ու օգնական լինելու կայուն հավատարմությունը կարող է գեղեցիկի, լավի, բարու հիանալի օրինակ ծառայել։ ՈՒստի զարմանալի չէ, որ Ալազանի՝ կնոջը նվիրված բանաստեղծությունները աչքի են ընկնում լիրիկական ջերմությամբ ու քնքշությամբ։

1956 թվականին հրատարակված «Հյուսիսային աստղը» վեպը, որը զգալի վերամշակումներով վերահրատարակվեց մի քանի տարի անց, ապա թարգմանվեց ռուսերեն, արդեն ուշագրավ երևույթ է սովետահայ արձակի բնագավառում։ Հյուսիսի դաժան և ցրտաշունչ իրականության պայմաններում պատկերված է այդ հյուսիսը նվաճողների տիտանական աշխատանքը, նրանց ծանր, հաճախ անմարդկային զոհողությունները ընդհանուր գործի հաջողության համար։ Թե՛ Նատալիա Սիլինան, երիտասարդ, վառվռուն, ռոմանտիկ երազների և խիզախ ձգտումների տեր այդ աղջիկը, թե՛ քաղաքացիական պատերազմների մասնակից, հին կոմունիստ Սեմյոն Սիլինը, թե՛ աղյուսի գործարանի կենսուրախ ու եռանդագին աշխատակիցներ Վազգենը, Յակով Մատվեիչը, Իվան Լոգունովը, թե, վերջապես, խստաշունչ ու պահանջկոտ, բայց բարի, մարդասեր ու հոգատար պարտկազմակերպիչը՝ Սեմյոն Զադորնին, ստացվել են համոզիչ ու բնական։ Իհարկե, առաջին անգամ չէր, որ Ալազանն անդրադառնում էր արդյունաբերական թեմատիկային, բայց այստեղ այդ թեման մշակված է առավել քան հաջողությամբ։ Իրեն զգացնել է տալիս նյութի քաջատեղյակությունը, որը որոշ դեպքերում հասնում է մասնագիտական հմտության։

Կյանքի վերջին շրջանում Ալազանն աշխատանքի էր նշանակվել Աշտարակում, որպես Պռոշյանի տուն-թանգարանի դիրեկտոր։ Նրա ջանքերի շնորհիվ թանգարանը դարձավ աչքի ընկնող գրական-կուլտուրական կենտրոն, որտեղ հավաքվել ու խնամքով պահվում են մեր դասականի գրական մասունքները։ Այստեղ էլ Ալազանը լավ դրսևորեց իրեն, և մեկից ավելի անգամներ նրա մասին դրվատանքով արտահայտվեցին մեր արձակագիրներն ու բանաստեղծները։ «Յուրաքանչյուր մարդ, – գրում է Սիլվա

Կապուտիկյանը, – անբացատրելիորեն իր շուրջը ստեղծում է իր ներաշխարհին համապատասխան անբռնելի մի մթնոլորտ, իր էության, այսպես կոչված, բիոհոսանքներից նյութվող ինչ-որ միկրոկլիմա։ Բարի ու գորովալից ճառագայթներ էին հորդում Ալազանի էությունից, մանկական պայծառություն, որը հաղորդվում էր դիմացինին, լցնում նույնանման ալիքներով։ Իմ վաղ պատանության տարիները, իմ մուտքը գրականություն ողողված է եղել ալազանյան այդ պայծառությամբ, նրա ճառագայթած հստակ ու թևավորող մթնոլորտով»։

1957 թվականին դավադիր հիվանդությունը՝ կաթվածը, անկողին նետեց Ալազանին։ Չնայած իր ծանր, գրեթե անշարժ վիճակին, մինչև կյանքի վերջը (1966 թ. մայիսի 17) շարունակեց ստեղծագործել Ալազանը, համաքայլ ընթանալով իր ժողովրդի գրական-մշակութային կյանքի հետ։ «Այսպես էլ հեռացավ նա աշխարհից, – գրում էր արձակագիր Աղավնին, – մեզ թողնելով իր պայծառ անունն ու բարի գործը, որը դեռ երկար կհիշվի, քանի որ նրան տրված ձիրքը Մարդ լինելու և Մարդկայնության ձիրք էր»։

Սովետական Հայաստան, 1973, № 113, մայիսի 16